Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99 S
2-30

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

891.542-93
Հ-30



# ՄԵՂՈՒՆԵՐԻ ԿՈՄՈՒՆԱՆ

10438
891.542-93
Հ-30

ՆԿ.Հ.ՇԱՎԱՐՇԻ

ՊԵՏՀՐԱՏ
1931
ՅԵՐԵՎԱՆ

(38)
2011-07

# Կենդանիների կոմունան

Ա

Կյանքն է յեռում
փեթակում.
աշխատում են
ու յերգում
հազար-հազար
բանվորներ —
աշխատավոր
մեղուներ.
մի կոմունա
ահագին,
ամեն բան լավ
ու կարգին.
Վոմանք փեթակն
են մաքրում,
աղբն ու կեղտը
դուրս տանում,
վոմանք հպարտ
ու կամաց
պատրաստում են
մեղրահաց,
վոմանք ընքուշ
խմբովին

1857
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

10 JUN 2013



խնամում են
մայր մեղվին
վոմանք մտնում
փոսիկներ.
մաքրում փոշոտ
տոտիկներ,
վոմանք ծանր
և ուշիկ
մեղր են շինում
անուշիկ...
Կյանքն է յեռում
փեթակում.
աշխատում են
ու յերգում
հազար-հազար
բանվորներ—
աշխատավոր
մեղուներ.
մի կոմունա
ահագին,
ամեն բան լավ
ու կարգին.

Բ

Ահա մի խումբ
բանվորներ—
աշխատավոր
մեղուներ
Թռան, յելան
փեթակից,
անցան փայլուն
գետակից
տեսան դաշտում
կակաչներ,
իրանց հոտով
ճանաչներ,
—Այ սիրունիկ
կակաչներ
մեր սիրելի
ճանաչներ,
մենք պաշար ենք
հավաքում,
մեղր շինում
փեթակում,
վոր յերբ փչի
ցուրտ քամին,
Ծաղիկները
Թառամեն,
հողմն ու բուքը
հառաչեն,
գետն ու առուն
ել սառչեն,
լինենք հանգիստ,
ապահով
ու չտեսնենք



քաղց ու սով։
Թողեք դեղին
ձեր փոշին
և անուշիկ
ձեր նեկտար
առնենք, տանենք
մեր փեթակ,
մեղր շինենք
մեզ համար։
—Բարով տեսանք
ջանիկներ,
մեր սիրելի
մեղուներ.

մենք լսել ենք
ձեր մասին,
աշխատում եք
միասին
ու չեք ասում
«քո և իմ»։
Հալալ է ձեզ
մեր փոշին
յեկեք, մոտեք
մեր ամբար
պաշար առեք
ձեզ համար։
մեղուները



# ՄԵՂՈՒՆԵՐԻ ԿՈՄՈՒՆԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0402144

ոսպադան
դրոհ տվին
ու մտան
կակաչների
արանքը,
ծաղիկների
բաժակը.
փոշին առան
վոտիկով,
քաղցր հյութը
կնճիթով,
թեվին տվին
ու թռան
դեպի իրենց
կոմունան,
ու աշխատում են,
յերգում
հազար-հազար
բանվորներ —
աշխատավոր
մեղուներ.
մի կոմունա
ահագին,
ամեն բան լավ
ու կարգին.

ԳԻՆԸ 35 ԿՈՊ



А. АЙРАЛЕТЯН

# КОММУНА ПЧЕЛ

ГИЗ
ССР
А
ЭРИВАНЬ

Պետհրատ № 1072 Գլավլիտ № 6444 (բ) տիրաժ 1000

Վրժ. պետտպարանի № 2056

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐ...
Гос. Публ. Библиот...

10438.